ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

«Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամի կարիքների համար Մաքսային միջնորդի (բրոքեր) ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԿԶՆԱԿ-ԳՀԾՁԲ-21/53» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2

22 հոկտեմբերի 2021 թ., ժամը 11:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

1. Սաթենիկ Մկրտչյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման հանձնաժողովի ղեկավար՝ ԳՊ/ԳԱՊ),

հանձնաժողովի անդամներ՝

2. Անի Թորոսյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ),

3. Անահիտ Գյուլնազարյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ),

4. Սոնա Մալխասյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ),

5. Արմեն Մկրտչյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ),

հանձնաժողովի քարտուղար՝

Ցոլակ Հակոբյան՝ (Գնման պատասխանատու/ընթացակարգի համակարգող՝ ԳՊ/ՄԻՄ):

1. Տեղեկատվություն՝ «ԿԶՆԱԿ-ԳՀԾՁԲ-21/53» ծածկագրով ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին.

Հայտերը բացվել են www.armeps.am կայքի՝ էլեկտրոնային գնումների իրականացումն ապահովող համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով՝ 22 հոկտեմբերի 2021 թ-ին՝ ժամը 11:00-ին:

2. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված գնման առարկաների գների վերաբերյալ.

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց սույն ընթացակարգի շրջանակում գնման հայտով սահմանված գնման առարկաների գները՝ մեկ թվով արտահայտված.

N	Գնման առարկայի անվանումը	Գնման հայտով սահմանված գինը (ՀՀ դրամ)
1	Մաքսային միջնորդի (բրոքեր) ծառայություններ	630000

3. Հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

N	Մասնակցի անվանումը	Հասցե, հեռ.
1	Ռոքս Բրոք ՍՊԸ	ք.Երևան, Մ. Ավետյան փ., 14/22 բն., հեռ. 091480968
2	«Դոմինո» ՍՊԸ	ք.Երեւան, Իսակովի 10/16, հեռ. 093605314

Ներկայացված հայտերը Համակարգի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

4. Տեղեկատվություն՝ Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետով նախատեսված հիմնավորումների վերաբերյալ.

Հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

6. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

Ռոքս Բրոք ՍՊԸ մասնակցի կողմից ներկայացված հայտը պարունակում էր հրավերով պահանջվող փաստաթղթերը:

«Դոմինո» ՍՊԸ մասնակցի կողմից ներկայացված հայտը պարունակում էր հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

7. Տվյալներ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած հայտի /հայտում առկա փաստաթղթերի/՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

Ռոքս Բրոք ՍՊԸ մասնակցի կողմից ներկայացված հայտը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

«Դոմինո» ՍՊԸ մասնակցի կողմից ներկայացված հայտը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես իրական շահառուների մասին հայտարարագրի մեջ լրացված չէր 1.3.3 կետը, գնային առաջարկի մեջ լրացված չէր ընդհանուր արժեք սյունյակը:

Քանի որ «Դոմինո» ՍՊԸ մասնակցի հայտում գնային առաջարկը սխալ էր լացված, հանձնաժողովը որոշեց մերժել մասնակցի հայտը: Հանձնաժողովի քարտուղարին հանձնարարվեց տեղեկացնել մասնակցին /ներին/:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

8. Մասնակցի (մասնակիցների) կողմից առաջարկված գները հետևյալն են.

Չափաբաժնի համարը	Գնման առարկայի անվանումը	Չափման միավորը	Քանակը	Մասնակցի անվանումը և առաջարկված գինը (ՀՀ դրամ)			
				Ռոքս Բրոք ՍՊԸ		«Դոմինո» ՍՊԸ	
				Գինն առանց ԱԱՀ*	Գինը ներառյալ ԱԱՀ	Գինն առանց ԱԱՀ*	Գինը ներառյալ ԱԱՀ
1	Մաքսային միջնորդի (բրոքեր) ծառայություններ	դրամ	1	219000		մերժված	

(*-եթե մասնակիցը ԱԱՀ վճարող չի հանդիսանում, ապա լրացվում է միայն «Գինն առանց ԱԱՀ» սյունակը)

9. Տեղեկություն՝ մրցույթի արդյունքների ամփոփման մասին.

Մասնակցի (ների) ներկայացրած փաստաթղթերի և գնային առաջարկի (ների) հիման վրա հանձնաժողովը որոշեց որպես ընտրված մասնակից (առաջին տեղ գրաված) հայտարարել.

1, չափաբաժնի (ների) մասով՝ Ռոքս Բրոք ՍՊԸ մասնակցին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

10. Տեղեկություն՝ մրցույթի արդյունքների հրապարակման մասին.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ չի սահմանվում, քանի որ հրավերի պահանջներին համապատասխան հայտ է ներկայացրել միայն մեկ մասնակից: Հանձնաժողովը հաստատեց պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը: Հանձնաժողովի քարտուղարին հանձնարարվեց հրապարակել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը և մասնակցին (ներին) ուղարկել պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

11. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա, ժամի և վայրի հաստատում

«ԿՁՆԱԿ-ԳՀԾՁԲ-21/53» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը կհրավիրվի ընթացակարգի պայմանագրերը կնքելուց հետո առաջին աշխատանքային օրը:

Հանձնաժողովի Նախագահ՝	Սաթենիկ Մկրտչյան	ստորագրություն
Անդամներ՝	Անի Թորոսյան	ստորագրություն
	Անահիտ Գյուլնազարյան	ստորագրություն
	Սոնա Մալխասյան	ստորագրություն
	Արմեն Մկրտչյան	ստորագրություն
Քարտուղար՝	Ցոլակ Հակոբյան	ստորագրություն